ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

№ 2111-Ա « 27 » մայիսի 2025 թ.

ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ Հ.5535 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հազարապետ Մկրտչյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի դեկտեմբերի 11-ի հ.3061 վկայագրով իրեն փոխանցված, Դալմայի այգիներում գտնվող 1000քմ մակերեսով հողամասի համար կնքված վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 2005թ. հունիսի 6-ի հ.1222-Ա որոշումը և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնելու մասին 2005թ. նոյեմբերի 30-ին կնքված հ.5535 պայմանագիրը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 620-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 21-ի հ.1530-Ն և 2015 թվականի հունիսի 25-ի հ.703-Ն որոշումներով, Երևան քաղաքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածով.

1.Լիազորել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Հազարապետ Մկրտչյանի հետ կնքել համաձայնագիր՝ Դալմայի այգիներում գտնվող 1000քմ մակերեսով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասի համար 2005թ. նոյեմբերի 30-ին կնքված վարձակալության հ.5535 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին՝ ներառելով պայմանագրում հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրում «Միշա Մկրտչյան AB0571777 013 Դավթաշեն 1թաղ. 14շ. բն.28» բառերը փոխարինել «Հազարապետ Մկրտչյան» բառերով.

2) պայմանագրի 9-րդ կետում նախատեսված հողամասի տարեկան վարձավճարը հաշվարկել գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային միջին զուտ եկամուտի 15 տոկոսի չափով.

3) պայմանագրի 13-րդ կետում նշված «900055040068» թիվը փոխարինել «900055040233» թվով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

5 Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ